


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
 Ե. ԹՈՐՕՏՅԱՆ  
 Նամակ կամ որ եւ է  
 գրութիւն պէտք է ուղղել առ  
 Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ Գրագրի  
 ԳԱԶԻՔԷ (Եգիպտոս)



ՔԱՆՏՈՐՈՒՄ ԳՐՈՒԹԻՒՆ  
 ԵԿԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ  
 Տարեկան ողջ դասին 60  
 Վեցամսեայ » 35  
 ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՆԵՐ  
 Տարեկան Տրակի 20  
 Վեցամսեայ « 12

E. TOROSSIAN  
 Directeur propr. du journal arménien  
 ARCHAËOLOGYE  
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՓԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՆՏՈՐՈՒՄ ԳՐՈՒԹԻՒՆ  
 ԵԿԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ  
 Տարեկան ողջ դասին 60  
 Վեցամսեայ » 35  
 ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՆԵՐ  
 Տարեկան Տրակի 20  
 Վեցամսեայ « 12

Խոնարարութեան ուղղութեամբ  
 գրութիւնք եւ չ'են տրուիր

Ա.Ջ.ԿԱՐԱՍՏՆՈՒԹԻՒՆԵՐ  
 Կանխիկ վճարելի են

ՃԵՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

—ՄԻՋԱՆԿԵԱԼ—

ՊԱՐԵՐ ՈՒ ՊԱՐԱՆՆԵՐ

(Շարունակութիւն նախորդ քիտէն)

Ժամանակագրական կարգը պահելու պէտքը անհրաժեշտ չէ. որովհետեւ մենք մանրամասնութեանց շատ աւելի խորերը մխրճելու նպատակը չունինք առ այժմ, ուր շատ բաներ թաղուած կան. այլ հարեւանցի կենսակ մը նետելով իրողութեանց վրայ, քանի մը օրինակներ պիտի առնենք, հաստատելու նպատակաւ «Արշալոյս» յի մէկ յօդուածագրին քանի մը խօսքերը, և այնուհետեւ եզրակացնելու համար մեր 151-րդ. թուոյն առաջին յօդուածին առթիւ տեղի ունեցած հարցմանց պատասխանը:

Մեզի յիշեցնողներ կան նաև թէ՛ Յառաջդիմաբան-Աղբատարնամ ընկերութեան դէմ լարուած դաւերու մասին գրած առտեննիս, մոռցած ենք յիշատակել Առաջնորդարանի կողմէ այնչափ եռանդով կազմուած Աղբատարնամին պատճառաւ, այն ատենուան Գաղաքական Ժողովին դատ բանալը իր ժողովուրդին կարեւոր անհատներէն մէկուն դէմ, որ կարծենք թէ պատշաճ չէր, եւ ինք ալ ապա ստրկացաւ իր ստակալի սխալը զգալով...:

Սկսուած ձեռնարկ մը պէտք է մինչև վերջը շարունակել. այս է մեր սկզբունքը: Հետեւաբար մենք այսօր թիւ երկու խընդրովը պիտի զբաղինք, ցատկելով այն ամենուն վրայէն որ չորս տարւոյ ժամանակամիջոցին մէջ տեղի ունեցած են: Եթէ հարկ ըլլար ժամանակագրական կարգը պահել, մենք ալ պիտի ստիպուէինք «Արշալոյս»-ը «Բիւզանդիոն» չափ մեծցնել, որուն համար կարծենք առ նուազն 50 ոսկուոյ ամսական պիւսճէ մը բանալ հարկ է, և Եգիպտոսայեցիք վիճի մը տրամադիր չեն երևար այդպիսի օժանդակութիւն մը ընելու...:

Սուլթան Համիտ եթէ իր հրէշային ծրագրի գործադրութեամբ ընդհանուր տեսակէտով Հայ ազգին ցաւերը բազմապատկեց, միւս կողմէ, Եգիպտոսի մէջ քանի մը փառքի հետամուտ և օտարամոլ Հայերու ալ ասպարէզ բացաւ, որոնք պէտք

ունէին անուն մը շինելու, կամ կորսուած ու չբացած անուն մը վերականգնելու:

Իրաւ է Սուլթան Համիտ իր հաւատարիմ հպատակները խողտողեց և կոտորեց. անոնց արձաններուն մէջ լողաց, իր հարեւի շղարակիրներուն քով վաւաչոտ ու դժոխային քրքիչներ արձակեց. մասնակի շարդերու կազմակերպիչները վարձատրեց ու բիր գովեստներու և շքանշաններու արժանի համարեց. սակայն մոռցաւ թէ իրեն չափ ուրախացողներ կրնան գտնուիլ նաև Եգիպտոսի ազատ հողին վրայ. եթէ գիտնար այդ, իր արիւնոտ շքանշաններովը թերեւս զարդարէր անոնց կուրծքերը. բայց հետըզհետէ պիտի գիտնայ և իմանայ թէ՛ ասպին —բացառութիւնները կը յարգենք— Արքայնամի անունն ալ շահագործելու չափ յանդուգն թիքացած cyrique մը և անոր նման ուրիշ մը, իրենց ճակտին խարանուած դատապարտութեան կնիքը սրբելու ձեռնարկին մէջ կը նետուին յախուռն կերպով: Եւ զարմանալին այն է որ մեր մէջ կեղծաւորներ ալ չեն պակսիր, այդպիսի ալտոսները իբրև ճշմարիտ Հայ ընդունելու և նոյն իսկ՝ երբեմն այդպիսեաց ձեռք յանձնելու նուիրական ու սուրբ գործերու զէկը:

Գողն և գողակիցն ի միում պատժոյ են կ'ըսուի. անուշտ օր մը առիթը պիտի ունենանք խարակելու այն դատարարն ալ, որ տրամաբանութեան օրէնքները չի յարգեր և կեղծիքի կենցաղ կը դիտէ իր շուրջը...:

Դառնանք մեր նպատակին, և ցոյց տանք թիւ երկու օրինակը, ըստ մեր խոստման:

1899 Մայիս 1ին Արաբկիրցի երկու ազնիւ երիտասարդներ իրենց հայրենիքի դժբաղդութիւնը և ծնողազուրկ որբերու անտանելի վիճակը ի նկատի ունենալով, կը կազմեն՝ Արքայնամի Ընկերութիւն մը և հրաւէր կ'ուղղեն իրենց հայրենակիցներուն և այլոց՝ գալ միանալ և համերայնութեան ոգևոլ յառաջ մղել նուիրական ձեռնարկը:

Դարձեալ ժողովրդական ձեռնարկ մը մէջտեղ կը նետուէր. համակիրներու թիւը հետզհետէ կը բազմանային և ուժ մը կը գոյանար. բան մը ընել պէտք էր... խոհմները մէջտեղ նետուեցան. բայց իրենց առաջին քայլերուն մէջ կրցան պահել պէտք եղած հանգարտութիւնը. քանի մը ժողովներ իրարու յաջորդեցին, սակայն հանգարտութիւնը վրդովող պատճառ մը չը

կար դեռ — միայն զայն փնտռողները և երկնողները կային...:

Հասաւ ժամանակը. 1899 Սեպտ. 2ն էր. Արքայնամի Ընդհանուր Ժողովը... գումարուած էր. կարեւոր սրտումներ պիտի արուէին և ատոնց ամենէն գլխաւորն էր «Արքայնամի կանոնադիրը Առաջնորդարանէն վաւերացուիլը». այդ. կ'ընդունինք թէ՛ պէտք էր այդ. բայց միևնոյն ատեն պէտք էր գիտնալ թէ՛ Առաջնորդարանը իր հեղինակութիւնը պահած էր դէպի ժողովուրդը. թէ՛ Առաջնորդարանը չէր որ քանի մը օրեր առաջ իր եկեղեցիին պատկանող հաւատացեալ և յերմեռանդ ժողովուրդէն 40-50 հոգին միանգամայն բանտ լեցուցած էր. թէ՛ կանոնագրին Առաջնորդարանէն վաւերացուիլը ո՞ր աստիճան կարեւորութիւն պիտի ունենար ընկերութեան մը անդամներուն համար, որոնց վստահութեամբ արժանանալ չէր ուզեմք Առաջնորդարանը:

Կանոնագիրը վաւերացուելու որոշումը վերջապէս նոյն օրը տրուած է եղեր. որովհետեւ այդպէս պէտք էր որ ըլլար փնդիքը յուզելու և Արքայնամի ՏԱՊՍԵԼՈՒ համար:

Յաջորդ թուով պիտի տեսնենք թէ՛ բռնուած այս նպատակաւոր ընթացքը մինչև ո՞ր աստիճան գրգռեց մտքերը, և մինչև ո՞ր աստիճան զգալի եղաւ դաւադիրներու ընթացքը:

(Շարունակելի) Ե.

Ո Ւ Ղ Ե Ր Ձ

ԱՌ Պ. ԱՆԱԹՕԼ ՅՐԱՆՈՒ  
 ՀԱՅ ՊՍԵՒԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷՆ

Պարոն,

Պատիւ ունինք, յանուն մեր բոլոր Եգիպտոսայ տոնակիցներու, ներկայացնել Ձեր սայի ամենէն փառաւոր և ամենէն վեհազան զաւակներէն միոյն՝ մեր երախտագիտութեան և զմեզ ոգևորող հիւսիսն զբացումներն:

Ձեր յ'Եգիպտոս ներկայութեան առիթը ձեռքէ փախցնելով, մեր անունն շնորհակալեաց հաւաստիքը ձեզ ընծայելու չ'փութալ անկարելի էր: Ձեր գալստեան լուրը սքանչացում մը եղաւ մեզ համար, որ սրտի միահամուտ տրոփման մը և ուրախութեան ստրտուի մը պէս խուժեց մեր յոյսներուն մէջ:

Այո՛, ինքզինքնիս յուզումով և սրտատրոփ բերկրութեամբ համակուած զգացիքք, որովհետեւ ըսինք թէ՛ մեզ մօտ պիտի ունենայինք մի անոնցմէ, որք ամենէն աւելի նպատեցին քաղաքակիրթ աշխարհին ուշադրութիւնը և հետաքրքրութիւնը հրաւիրելու ճշուած ու

ստանակոն եղած գծերը ժողովուրդի մը վրայ :

Պարոն, ձեզի կը ճանչնայինք արդէն բաւական երկար ժամանակէ ի վեր : ձեր գրական համբաւին արձագանքը մինչեւ մեզի հասած էր : ձեր գրքերուն ընթերցումը ձեր վրայ հիացողներու թիւը կը յաւելուր մեզմով : ձեր գործերէն — որք նոր եւ գրաւիչ ինքնատուութեամբ լինեն — կը ճանչնայինք զձեզ եւ ասոնք զձեզ մեր սրտերուն ու հոգիներուն աւելի սիրելի դարձուցած էին եւ մեր ամենէն աւելի պաշտելի կուրքերէն մին ըրած : Եւ Ֆրանսայի գարգացեալ գաւակներէն մեծ մասին մասնաւորապէս պարտականութիւն համարած հայապաշտպան վեհանձն գործին մէջ ձեր ունեցած բաժինը, որ չարչարանքի կատարման կապուած ամբողջ ազգի մը անոնի տառապանքը սիրտին էր, եկաւ բազմապատկելու մեր հիացումը եւ զայն՝ կրնանք ըսել, պաշտումի վերածեց :

Այո՛, պարոն, մեր երախտագիտութիւնը զէպի ձեզ եւ ձեր նմաններն չափ ու սահման չունին : վասնզի, թէպէտեւ մեր թշուառ հայրենեաց սիրով վառուած մեր Ֆրանսայի մէկ քանի հայրենակիցներու մեր ազգին վրայ ձեզ արուած տեղեկութիւնն եւ մեր պատմութեան մէկ քանի ընդհանրապէս անձանօթ կողմերուն եւրոպայի աչաց առջեւ պարզուելէն յետոյ, ձեզ եւ համար պարտականութիւն մ'էր ընել ինչ որ ըրիք ու կ'ընէք զեւ : այսու հանդերձ ձեր վեհանձնութիւնը այնու աւելի պաշտելի է մեզ համար՝ զի կրնայիք շատ մը ուրիշներու պէս ձեռնպահ մնալ, ձեր երկրին կառավարութեան հետեւած քաղաքականութեանը հակառակելէ զգուշանալով, եւ մեր գաւառի արդունքով թրջուած եւ զայրոյթով բորբոքուած էջեր նուերեցիք :

Այս ասիկայ զմեզ չ'զարմացներ : ազգաց պատմութեան մէջ ուժին եւ իմացականութեան սա զանազանութիւնը կը գոնենք : միոյն գլուխը անարատ լուսապսակով մը չըջապատուած է, իսկ միւրին գափնիները շատ յաճախ մարդկային արեամբ ներկուած : Դուք եւ ձերիները մեր ժամանակին իմացականութիւնը կը ներկայացնէք : Ձեր գործը սուրբ եւ մաքուր է : Գլուխ մեծ պտուտութեանց, որոյ մէջ կը կայանայ ուժ մը, թող ներքին մեզ ըսել թէ՛ իրենց կատարած գերը վեհանձն ըլլալէ շատ հետի է եւ չ'ենք կարող հասկնալ թէ՛ ինչպէս մերժեցին եւ ցարդ կը մերժեն ընելու այն ժեսը, որով՝ այժմ կը հաւատեն մեզ թէ՛ կրնային զմեզ անթօրէն խողովող ձեռքը կասեցնել :

Եւրոպան չի՛ տեսներ որ այդ սպանուած ձերունիները, այդ պատիւնին բռնաբարուած ծաղկատի կիները եւ աղջիկները, այդ հողորդները կրօնասէր հաւատացեալներով լեցուն հրոյ մասնուած եկեղեցիները, այդ բռնաբարուած մէջ անուր նրբանքներով լի չարչարանքներու մասնուած երկատարութիւնը, թէ՛ այդ ամենը արեւնալից նախախնայ մէջ բոլոր քրիստոնէութեան երեսին նետուած : Դուք, դարուս իմացականութիւնը, մեծաձայն գոռացիք եւ կը գոռաք այս նմանը չ'տեսնուած բռնակալութեան զէմօ օրհնեալ եղէք : պատմութիւնը ոսկեգոծ տառերով պիտի արձանագրէ Ձեր անունը, վատահենք, մինչդեռ ուրիշ անուններ անիծապարտ պիտի մնան :

Մեզի համար, որ գուցէ լաւագոյն վիճակի մը արժանի էինք, թո՛յլ տուէք, Պարոն, կենդանի աշխարհէն անդին ցուցնել ձեզ այն անպատու քաղցրութեամբ համակուած երախտագէտ նախուածքները, զոր ձեր վրայ կը յուսն հազարաւոր թշուառ աչքեր, զորս բարբարոս մոլեռանդութեան մը վայրագ գործակից կատարի խնդրեր, արեան մէջ խեղդեցին ի մեծ նախատինս Եւրոպայի, որ կարող էր արգելել եւ որ սակայն անտարբեր մնաց :

Յ. ՍԵԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Սոյն նորակազմ ընկերութեան անդրանիկ հրատարակութեան Ա. պարակը հրատարակ ելած է : Չայն ունենալ կամ անոր բաժանորդագրուել փափաքողները, ց'նոր տնօրինութիւն, պէտք է գիմեն Արշալոյսի հասցէին :

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՕՐՀՆԵՐԳ

Ի Պսակ անուանուեալ Հաւատարմայ Նոյեմի Օրհորդի Երկրագնաց Պեյ  
Ընդ Ազնուարեւմտ Տիար Միսաք Ժամկոչեանի

Ու՛ր զու Հիմեկ, ու՛ր կը վազեւ ուրախաւսն, եւ արսասեկ հարեւ ֆեւր մեր Հայկական : Ձեռքդ բռնած ծաղիկ շինուած մի Սուրբ Պսակ, Ռում սուա Ասուած սիրոյ բոյր անուշակ : Ու՛րիկ առի զու ուխտաւոր այդ ծաղիկներ, եւ հարսեկան բոյրեցիր կենաց ետե՛ր :

—Այս ծաղիկներ Եղեւակի զարշակեալ առի Չոր ծրեցիկ մեր Սուրբ վարդապետ Հայաստանի Չայն կը սակիլ զիջ գրուի Երկրագնաց Պեյ Ռոյալի զարշակեալ շարժումին ու ծաղիկներն : Եւ ծաղիկայից բարգաւառի այս ետ եղեւ Նոր Եւայիկ ետ Աղաւթի սերունդ վեւեկ :

ՍԻՄՈՆ ՖԷԼԷԿՍԱՆ

Ազնուաշուք եւ հասցնիք բարեկամ ՏԻԱՐ ԿԱՐԱՊԵՏ ՄԻՀԱԼՕՅ

Ձեր արսասեւոր որդեկիկ Տիար Գրիգոր Միսակոփի ընդ Ազնուապայ Օրհորդ Չարմէի Միսիսիսեանի ունեցած անուանուեալ շէնքի, եւ շատ ուրախացայ՝ այն մեծ յուսով որ, իւր ունեցած ընկերակցութեան օրինակէի զարստարարութեան, եւ ձեզ նման ազնուական սերունդի մը շարժումը շատ արագ զեղեցիկ ոգովն շարժուի աստիք պիտի ըլլան Միսակոփի անուան յիմարդը՝ այն է Հայ անուանուեալ շէնքի, եւ Ասուածայիկ օրհնութեան, եւ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ ձեռնարարութեան ետ անոր Գրիգորներ եւ անոր Չարմէիներ պիտի փոքիկ Հայաստանի ծաղիկաբոս զարշայր մեջ, ուր ամեն ճշմարիտ հայու սիրտ կ'երթան կը բոյրեն օրհնածայն :

Այո՛, Հայոց Եկեղեցւոյ օրհնեց երկու անուանուած պսակն զոր մեկ կը շնորհաւորեմք արսակի բարեկարգութեան, որ անուանակալ սուրբ սերն իրենց առաջնորդ ունեցելով միասին ապրին ու ծերանան, գիտելով որ, երբ անուանուեալ մեջ պսակի կիսակալանեկ երկու անկեղծ, եւ միմեանց բոյրանուի սերը չ'կայ, հոն նաեւ երջանկութիւն եւ կենաց ազատ անշնչութիւն չ'կայ : ուսի այս ոգով կ'ըրձակուի, որ անուանակալ սիրոյ եւ պարտոյ մեջ մեծնալով պատիւ բերեն Միսակոփի, եւ Միսիսիսեան գերաստանին, եւ փառք ու պարծանք ըլլան Հայ Ազգին :

Ձեր անձնուեր բարեկամ ՍԻՄՈՆ ՖԷԼԷԿՍԱՆ

ՄԱՏՐԻՏԻ ՃԻԶՈՒԹԻՒՆԵՐԸ

Հաւատարմութեան արտափոխուելի գըրութիւնը, որ տասնհինգերորդ դարուն սկիզբները սահմանուելով՝ մինչեւ տասնհինգերորդ դարուն առաջին քառորդը շարունակեց, միլիոնաւորներու կենսաբոլոր մեծ մասնէն որ Պապէն հաստատուած Դոմինիկեաններու հալածանքէն ծնան քստող ու մեծ մտքեր, հզօր արտոյտաններ, անձնուէր մարտիկներ՝ Դոմինիկոսի զեղծ հետեւողներուն անողոր ուժը շարժախելու սահմանուած, որով այն մարդակուլ հաւատարմութիւնը 1820 ին ուր ուրեմի վերջացաւ եւ ազատամտութիւնը պարզեց իւր յաղթական գրուելով մոլեգնոտ Դոմինիկեաններու վրայ, որոնք մարդկութիւնը միայն եւ միայն իրենց քսակին եւ ազատի կրից զոհելու ստան, հիւլէի մը չափ խղճահարութիւն չ'ունէին :

Բռնութիւնը ազատութիւն կը ծնի : անգլիոյն տրուած հարուածները, եմթակային մտքին մէջ զայն փոխարինելու նախը մը կ'արթնցնեն : այս անվիճելի է :

Հարկ չ'կայ անցեալը մեր աչքին առջեւ պատկերացնող հզօր եւ ուղղամիտ գրիչներու արտադրութիւնները քրքրել :

Եթէ կարեւորութիւն չ'ընծայենք մեր աչ-

քին առջեւ գտնուող բերքաւոր սնկախելի ապացոյցներուն, այն ստան մեր անհարկները զէպի եւ պէտք է ուղղել, ուր մեզ պիտի հանդիպին առաջին անգամ, մարդկութեան վիճակներուն ամենաստոր խարդաւանանքները :

Դեռ հողիւ մէկ գար կրնանք հաշուել հաւատարմութեան եւ ազատութեան անշնչաբոլոր եւ զեռ Սպանիա, երբեմնի հաւատարմութեան սրբանը, սակաւին կը հեծէ կոյր Չերմեաններու եւ սեւ ծրարներու վոնձակէն փչած խորշակին ազդեցութեան սակ :

Սպանիա ստանց յուշ բերելու իր մտաւոր անցեալը եւ անոր սոսկալիթխար վնասները անձերու կորուստի տեսակետով — զեռ կրօնի արժարժած խաւարին մէջ կը տապալակի ու իր սրտին մէջ կը սնուցանէ ճիգովիներու ջոկիքը, որոնք ստեղծ իրենց մարգարայն իշխանութիւնը խեղճ էակներու վրայ տարածելու եւ իրենց ազատութեան ու բոլորապատկան զոհերը բազմապատկելու ջանքեր կ'ընեն : ու անցեալէն խրատուած սպանիոյ փորձառու ժողովուրդը, սակաւին ամենահզօր ջանքեր չ'ընեն միանգամ ընդ միշտ անհետացնելու իր մէջէն ճիգովիներու վոնձակը, որոնք Սպանիոյ անցեալը աղարտած են :

Եթէ զձ Սպանիա, զեռ Բարցոյ Գուիլերո նաւուղ պէս խարխուլ վիճակ մը ունիս ու պիտի ունենաս : քանի որ քու կուրծքիդ մէջ կրօնի սրբիքը կը սնուցանես . . .

Ամսոյս 13 ին հետապիւնները կը ծանուցանէին թէ՛ «Սպանիոյ մայրաքաղաքին, Մատրիտի մէջ, ազատամարտի շարժումներ պատահած են : թէ՛ զինուորները յարձակմամբ ցրուի են ամբարի» եւ հետեւեալ օրուան, 14 Փետրուարի, հետապիւնները դարձեալ միեւնոյն կը կրկնէին, յաւելլով որ «Բարցոյ մէջ պաշարման վիճակը հրատարակուած է» :

Այս քանի մը տողները բնական է Վժէ ոչ ոքի ու շարժութիւնը եւ հրատարակութիւնը շարժեց եւ շատեր միայն իրը հետազոտական լուր մը կարգապիս ու մէկ կողմ գրին : առանց այդ կրօնի ազդեցութեան սակ ճնշուած Սպանիոյ կառավարութեան գործերովը զբաղելու, որը իր ուժը իր ժողովուրդին դէմ գործածելու չափ սկսեալու ալ գտնուած է :

Անս թուելք այն պատճառները որ Սպանիոյ մայրաքաղաքը այս պահուս շփոթութեան մէջ գրած եւ ալիկոնեալ նաւու մը նման կը տարուերի ժողովուրդին բարեկութեան գոյացած կատարի ալիքներուն վրայ :

Ժողովուրդական յուզումին շարժումին է Ուպաո անունը բնատեղի մը ահալին հարստութիւնը եւ կարծազգեստ ճիգովիներուն անոր արեւապետելու միտումը :

Խնդրոյ առարկայ հարստութեան ժառանգորդն է Օրիորդ Ուպաո, որ Գարմէնա անունով ճիգովի մը ձեռքով «Սագրէ Գեռոն» վանքը կը տարուի : Իսկ աղջկան մայրը Տիկին Ուպաո կը պահանջէ որ իւր աղջիկը վանքէն արձակուի :

Մատրիտի նախնական դատարանը — դատարաններու մէջ ալ յաճախ արդարութիւնը կը հալածուի — չուզեր նախապէս տեղի աւել Տիկին Ուպաոի բողոքին եւ կը մերժէ այդ խնդրով զբաղել : բայց Տիկին Ուպաո յուսատեղանքէն չէ կտրել, կը դիմէ բարձրագոյն ատենին : որ բեկանի կուզէ նախնական դատարանի վերջի :

Բարձրագոյն ատենին առջեւ, Տիկին Ուպաոի դատին պաշտպանութիւնը Պ. Սալմէրոն երեսփոխանը իր վրայ առած է, եւ խնդիրը ամբողջապէս պարզած է թէ՛ Օր. Ուպաո, որ Չերմեանի կաթոլիկ բնատեղի մը կը պատկանի, իր հօրաքրոջ ժառանգորդն է, եւ նշանուած է կարեւոր քաղաքի մը քաղաքապետին հետ եւ թէ՛ ճիգովի կրօնաւորի մը, որուն նպատակն է այդ հարստութիւնը վանքին սեփականացնել, թեւաբարութեանց անալով, իր նպատակը փոխած եւ վանք մասնի որոշած է : թէ՛ ճիգովի իր կար ու գողանի թղթակցութիւն մը շարունակած է իր սպաշորող հիին հետ եւ զայն վանք մասնելու յորդորած : թէ՛ Օրիորդ Ուպաո իր 25րդ. տարեքը թեւակոխած չ'ըլլալուն, օրինագրքին բոլորովին

հակառակ է անոր ազատ ըլլալը եւ վանք մը-  
նելու համար տուած որոշումն :

Սուրբ Գ. Սարգիսի իր եզրակացութիւնները մեծ  
ճարտասանութեամբ վերջացուցած է եւ վճիռը  
քանի մը օրէն պիտի տրուի :

2000 է աւելի անձեր մինչեւ իր տունը ըն-  
կերացած են Գ. Սարգիսի եւ համբռուն վրայ  
երեք վանականներու հանդիպելով բարձր ձայ-  
նով պոռագած են «Կեցցէ՛ ազատութեանը, անկ-  
ցի հակազդեցութեանը» :

Վերջապէս ամբողջ ուղղութեամբ ճիշդութե-  
անբարձր գոյնքին առջեւ, կրկնած է միեւնոյնը  
«Կեցցէ՛ ազատութեան, անկցին ճիշդութեանը»  
գոչելով :

Գ. Սարգիսի բնակարանին առջեւը հաս-  
նելով, ամբողջ պահանջած է որ երեւոյթները  
պատշաճման վրայ ելլէ եւ Գ. Սարգիսի հա-  
մակերպելով ամբողջ պահանջման, պատշաճ-  
ման հետեւեալ խօսքերը ուղղած է իր հաւաք-  
ուողներուն. «Կարգապահութեամբ տուններնիդ  
գացէ՛ք, որպէսզի չըսեն թէ՛ ազատութեան  
աշտպանները պատճառ տուած են ոտակական  
միջամտութեան եւ եթէ այս ցոյցերը անհետացող  
չըլլա՞նք հուրեր չեն, ուղղուի չ'ուղղուի ա-  
զատութեանը պիտի վերահաստատուի :

Ահաւասիկ հաւասարեցնութեանը պաշտպա-  
նող Գոմիսիականներու մնացորդները կամ ա-  
նոնց նմոյսները, որոնք Սպանիան իր քաղա-  
քական բարձրութեան խոնարհեցնելու պատճառ  
գործած են եւ այսօր Սպանիան դեռ կը տուժէ  
անոնց գոյացուցած վնասներն : Ինչո՞վ կրնանք  
հաստատել թէ Հայկական անկումն ալ մեր խա-  
ւարամիտ ու կոյր կրօնաւորներու ազատութե-  
անն է եւ ետմտութեանն առաջացած չէ : Սպա-  
նիան մեզի օրինակ ուստի մեր կրօնաւորներուն  
համար այլ եւս պէտք է որ վճենք. «Կաւ շաւ,  
կաւ բնաւ» :

Գոմիսի 21 Փետր. 1901 ՓԱՅԱԿ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բէթթաուն 15 Փետր. — Պօէրք Օրանժը ան-  
ցած են Յանա Տրիֆթէն՝ ամսոյս 15 ին, և  
լու պաշտպանուած տարածեալ դիրք մը  
բռնած են Ֆիլիքսթաունի ուղղութեամբ :  
200 գաղթավայրի զօրքեր չորեքշաբթի  
1500 Պօէրի հետ կուռեցան և կրցին մին-  
չև Բլիմըրի հրամանատարութեան տակ գրա-  
նուող Աւստրալեան շոկատին ժամանումը  
դիմագրել : Թշնամին այն ատեն քիչ քիչ  
ետ մղուեցաւ :

Գալվինիան գրաւող Պօէր գոմիսնոսները  
մեծ անգթութիւններ գործած են. նմա-  
նապէս խարազանած են օգնական-գասա-  
ւորը :

Բրէթթորիա 20 Փետրուար. — Գլէբ  
Բիվըրի Պօէրները վաճառաբարձ կառախուձը  
մը գծէն շեղեցուցին, որ ճիշտ Լորտ Բիչ-  
նէրը Տէ Արէն Բրէթթորիա բերող կառա-  
խումբին յառաջընթացն էր. 4 վակօն կտոր  
կտոր եղան և մեքենավարը սպաննուեցաւ :  
Չրահապատ վակօններ և Լորտ Բիչնէրի  
անձապահ շոկատը անմիջապէս առաջ փու-  
թացին և Պօէրները վանեցին :

Բէթթաուն 20 Փետրուար. — Պօէրները  
Թաթալայի մօտ կառախուձը մը մը գծէն  
շեղեցուցին և գրաւեցին. պաղարեամբ հը-  
րայանեցին վակօններուն մէջ գտնուող  
բոլոր բնիկները :

Վիէննա 20 Փետրուար. — Կրէտէի  
պաշտպան պետութիւնները կը քննեն մի-  
ջազային գրաւող բանակին տեղ Յունական  
բանակով կղզին պաշտպանութեան մէջ դը-  
նելու խնդիրը :

Աթէնք 21 Փետրուար. — Վիէննայէն  
հեռագիր մը կ'ըսէ թէ՛ պետութիւնները  
տրամադիր են կրէտէի եւրոպական բանա-  
կին տեղ Յունական զօրքերէ բանակ մը կազ-  
մել. մեր պաշտօնական շրջանակներուն մէջ  
գեռ բան մը չ'գիտցուիր :

Կ. Պօլիս 20 Փետրուար. — Սոսկալի  
փոթորիկները պատահած են Թրակիոյ ե-  
զերքները և Մարմարայի մէջ :

Սօֆիա 20 Փետրուար. — Պօլիս Իշխա-  
նը հոգեվարք է :

Սօֆիա 21 Փետրուար. — Պուլկարիոյ  
գահաժառանգին վիճակը միշտ ծանր է :

Կ. Պօլիս 21 Փետրուար. — Սուլթանը  
Մեծն Բրիտանիոյ դեսպանին ըսած է որ  
կրէտէի արդի կացութիւնը կ'ընդունի :

Պէլկրատ 21 Փետրուար. — Սերպիոյ  
Տրակա թագուհին արու զուակ մը ծնած  
է. այս գահաժառանգին ծնունդը Սերպ  
ժողովրդեան մեծ ուրախութիւն պատճա-  
ռած է. թագաւորին և թագուհւոյն ամեն  
կողմէ շնորհատրական հեռագիրներ կը տե-  
ղան :

ՏՕՔԹ ԲՕՐՆՖԷԼՏ

ՎԿԱՅԵԱԼ ՎԻԷՆՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Նախկին Ներքին Բիւրօյի Վիէննայի գըլ-  
խաւոր հիւանդանոցներուն : Մասնագէտ  
միզանցբային հիւանդութեանց, Գաղղիա-  
կան արտի, կոկորդի, քիթի և բերնի  
հիւանդութեանց :

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ  
առաջ ժամը 10 և 12, իսկ կէս օրէ վեր-  
ջը ժամը 3 և 5, իր տունը Շէրիֆ փա-  
շա փողոց, ԱՂԵՔՍԱՆԻՐԻԱ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՐԵՆՈՐԵԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՔՎԱԶԻ-  
ՐԻՒ ՀԱՅՈՑ. — Բարեկեցիկանի օրերուն մէջ  
ենք : Օրէրա Խտիվիալի մեծատու ԱՔիշնե-  
րու տեղը Իտալականը, Յունականը և ու-  
րիշներ փայլելէ վերջ, պատշաճ էր որ Հայ-  
կականն ալ իր տեղը ունենար ու այնպէս  
ալ եղաւ :

Արչափ ալ սուղ գնուած ըլլայ այն—  
կ'ըսեն թէ մինչև 150 սակոյ չափ ծախք  
մը պիտի ունենան Բարեգործականները —  
Գործեալ պէտք էր որ եղիպտոսայ գաղու-  
թը փոթ տանէր այդ միջոցով զգացնել  
օտարազգեաց թէ՛ իրենք ալ բարեգործել  
գիտեն. իրենք ալ տոհմային զգացում կը  
կրեն. իրենք ալ իրաւունք ունին համրուելու  
աչքի լարնող ազգաց շարքին մէջ :

Չորեքշաբթի օրը 27 Փետրուար, ժամը  
8-3/4 ին Խտիվական թատրոնը արտասովոր  
և շքեղ ներկայացում մը պիտի ունենայ  
ուրեմն, ինպատ Հայ Բարեգործական Ըն-  
կերութեանց և այս առթիւ Ֆրոնտական  
կատակերգական խումբը, ընդ տնօրինու-  
թեամբ Գ. Պէրնիի և մասնակցութեամբ  
Տիկին Ճէն Հէյտինկի յանձն տուած է ներ-  
կայացնել LA PRINCESSE DE BAG-  
DAD, երեք արար, հեղինակութիւն Աղէք-  
սանդր Տիւմա որդւոյն և Թրիսթան Պէռ-  
նարի մէջ արար Վօտիլիլ (երգախառն թա-  
տերախաղ) L'ANGLAIS TEL QU'ON LE  
PARLE :

Գ Ի Ն Ե Ր

Առաջին Օթեակ թիւ 11 Դահ. ողջ  
600. — Պէնտաու 400. — Առաջին Օթեակ-  
ներ 400. — Երկրորդ Օթեակներ 200. —  
Թիկնաթոռ 40. — Միթալ 20. — Վերնատուն 5 :

Հայկական այսպիսի ձեռնարկ մը բնա-  
կան է թէ՛ պէտք եղած քաջալերութեան  
պիտի արժանանայ մերազնէից կողմէ :

ԱՂԵՔՍԱՆԻՐԻՈՅ Թաթալայի մը 50  
միլիօն սակի մօտ գուձար մը ժառանգած  
է անսպասելի կերպով. մանրամասնութիւն-  
ները մեր յաջորդ թուով :

ԱՂԵՔՍԱՆԻՐԻՈՅ Թաթալայետու ի հան յանձ-  
նախուձըին նախաձեռնարկութեանն յետոյ,  
Տօրթ. Շիս պէյի առաջարկութեան վրայ  
Աղէքսանդրիոյ շատ մը երեւելիները Գ.  
Քօսթանթէն Սալվաիօ տունը հաւաքուե-  
ցան Նուպար բաշային յիշատակարան մը  
կանգնելու համար մասնախուձը մը կազմե-  
լու : Ահաւասիկ մասնախուձըին կազմութիւ-  
նը. Ն. Վ. Մօրիս բաշա նախագահ, Տօրթ.  
Շիս պէյ, փոխ-նախագահ. Լ. Էսքօֆիէ  
գանձապահ :

Անդամները հետեւեալներն են.

Է. Պէնաքի, Սիրնէյ Գարալըր, Ժ. Է.  
Գօրնիչ, Ահմէտ պէյ Էյութ, Հայրալիս բա-  
շա, Ժօրթ Գարալ, Խալիլ բաշա Խաւաթ,  
Է. Մալիսըն, Հ. Մանուկարափ, Պառօն  
Ժագ ար Ռէնաչէ, Հասան պէյ Մօհսէն, Ժ.  
Միւլլէր, Ճօն Բիվլ, Բ. Բօլօ, Գ. Սալվա-  
կօ, Ս. Սինսգինօ, Շէյիս Սօլիման բաշա,  
Լ. Սթանեի, Գ. Վօն Զուաի, Ամպ. Զէր-  
վուտաքի :

Գալով յիշատակարանին, տեղը գեռ  
որոշուած չէ. կ'ըսեն թէ հին ամբուլթեանց  
մօտերը նոր Սգուէրնէր պիտի շինուին մաս-  
նաւորապէս յիշատակարանին համար :

Ամեն ծրագիր մասնախուձըին քննու-  
թեանը պիտի ենթարկուի և անկէց պիտի  
հաստատուի :

ԿԵՆԻԱՆԵԱՅ ՀԱՄԱՐ. — Հէլուանի մէջ  
Տիկններէ բաղկացեալ մասնախուձը մը  
կազմուած էր, ինպատս գահիքէի անաս-  
նապաշտպան ընկերութեան հանգէս մը  
պատրաստելու համար :

Հինգշաբթի երեկոյ տեղի ունեցաւ  
հանգէսը, ամենակատարեալ յաջողու-  
թեամբ :

Երկուօրուոյ վարչութեան կողմէ մաս-  
նաւոր կառախուձը մը տրամադրուած էր,  
ուշ ատեն գահիքէ փոխադրուի. համար  
անհամար զբօսաշրջիկները, որոնք հանդի-  
սին ներկայ եղած էին :

ԸՆԴՀԱՏԱՅԱՆ ՁԵՐՄ. — Զակաղիկէն  
կը տեղեկացնեն թէ՛ 18 հոգիներ ընդհա-  
տական (intermittente) շերտէ բռնուած են :

Առողջապահական վարչութեան բիւրօյ  
անմիջապէս պէտք եղած միջոցները ձեռք  
առած է հիւանդները շեղաքայնելու համար :

Տեղեկագիրը ցոյց կուտայ թէ հիւան-  
դութիւնը Նաւաէն (Կալիօպոլիէ) եկող  
տենգաբեր կլիմայէն յառաջացած է :

ՁԵՐՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ. — Ֆիլյումէն  
ներքին գործոց նախարարութեան կը հե-  
ռագրուի թէ՛ սակէ առաջ տաժանակիր շա-  
խատութեան գտտապարտուած մը, Մօհամ-  
մէս-Ապու-Էյիս, որ Աղէքսանդրիոյ բան-  
տէն փախչելու յաջողած էր, գազտնի ու-  
տիկաններու ձեռամբ բռնուած է :

Մօհամմէս հինգ տարուան տաժանակիր  
այխատութեան գտտապարտուած էր :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՊԷԼԱՍԹԻԹԻ ԿՈՒՒՐԸ

Փետրվար 6 ին տաք կռիւ մը տեղի ունեցած է Պալատիկէն 8 մղոն հեռի, Անգլիացի 24 հեծեալներու և Բրիտանիկէրի գումանասօին մէկ շոկատին միջև:

Ազարակի մը քովէն անցնելէ յետոյ անգլիացիք դէմ առ դէմ եկած են Պօէր զինող շոկատի մը: Այդ շոկատը բաղկացրնող մարդիկը անմիջապէս Քօբեէի մը ետեւը քաշուած են, մինչդեռ անգլիացիք ալ երկու Քօբեէի վրայ դիրքեր կը բռնէին:

Սոսկալի հրացանաճգութիւն մ'է կ'կրուկրսի, Պօէրները նոր օգնազօրք ստանալով շրջառիկ շարժում մը ուրուագրած են. և թէև առաջ ետ մղուած են, բայց սակայն քիչ յետոյ յաջողած են անգլիական դասակը պաշարել և զայն գերի բռնել:

Անգլիացիք 5 մեռեալ ունեցած են, մինչդեռ Պօէրները 3: Պօէրները՝ անգլիացի գերիները լաւ մը կողոպտելէ յետոյ ազատ արձակած են:

ՊՕԷՐՆԵՐԸ Ս. ՀԵՂԻՆԷԻ ՄԷՋ

Պօէր գերիները կը շարունակեն գանգատիլ իրենց վրայ դրուած ընթիմին խրատութենէն: Թէպէտև գիտեն Պօէր գոմանատներուն յառաջխաղացութիւնները Բարի գաղութին մէջ, և անգլիացի սպարապետին խառնաշփոթ կացութեան մը մէջ գտնուիլը, սակայն անհամբերութեան և ռիսակալութեան սաստկացումով կը տանին իրենց դժնդակ կացութիւնը:

Անոնցմէ շատերը որոշած են ամեն միջոց փորձել փախչելու համար, բայց Ս. Հեղինէն հեռաւոր կղզի մըն է և շատ մը նաւեր ակնդէտ պահպանութիւն կը կատարեն:

Վերջերս պահակ մը, հրացանի հարուածով Պօէր մը սպաննած է, Տէտլուտի բանակատեղիին մէջ: Եղած քննութենէ մը կը հետևի թէ Պօէր գերիները քարերով ու գաւազաններով պահակին վրայ յարձակեր են ու զինուորն ալ իրաւացի անձապաշտպանութեան հարկին մէջ դտնուելով զարկած է:

—ԲՐՈ ԱՐՄԷՆԻԱ կը տեղեկացնէ թէ՛ Կ. Պօլսոյ ֆրանսական դեսպան Պ. Բօնսթան, որ իր սուլթանանուէր քաղաքականութեամբը ախրահոյակ է, տեղեկագիր մը ջրկած է ֆրանսայի արտաքին գործերու նախարարութեան, որուն մէջ կը յայտարարէ թէ հայաստանի կացութիւնը այնքան ծանր է հիմակ որքան մեծ կոտորածներու միջոցին, և գուցէ աւելի ծանր իսկ:

ՆՈՐ-ԿԵԱՆՔ

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՐԱԹ 22 ՓԵՏՐՈՒՄ 1901

2822	527	1515	7656	2512	7461
2552	1177	9357	3795	4249	1466
7325	1313	2280	430	4372	8362
3247	158	5708	9541	6143	3698
	2923	9503	8906		

Տպագրութիւն ԺՈՂՈՒՐՄԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալատի փողոց. Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթլ Օթէլի ճիշդ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից:

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ԲՍԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներն են եւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է:

400 է աւելի վիսյականներով եւ մեքայներով վարձատրուած, Երաշխաւորեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերակալն արուեստահանդիսին մէջ ստացած է:


ՀԱՌԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻԲԻՆ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ Ի յատկանշիլն:

ԳԻՆ ՉԱՓԱՌՈՐ



Ձրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ:

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն հինմեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

ՄԱՆԿԱԲԱՐՉ ՏԻԿԻՆ ՍՈՑԻԱԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ Շարա-Ապխիւր-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսֆիշէն փոխադրած է Շարա Ապտիւր Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց, Անմէտ պէյ Ապտիւր Բազըիի 20 թիւ սեփականութեան մէջ:

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով դասիւրէրնակ ազգայնոց եւ նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնարարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն:

Վկայեալ աղքատներուն համար ձրի դարմանում:

ՄԻ՝ ՄՆԱՔ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՑՅԻ

Քանի որ ՍԷԼՎԱՃԱՆՆ վաճառատուն մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՎՄԻ ի նիքէլ, կոթէն լարուող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է: Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ: Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և օքսիտէ ժամացոյցներ. պատի և քօնսի թղմազան Բանտիւններ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք:

Ճիս հաւաքածոյ բուն Ամերիկեան միօնօկիրաֆներու:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ ՀԻՄՆԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՒԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՂԸ

Օտանկի ղեկարանին ղիւնացի փողոցին մէջ:

Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին:

Այցեխարտեր, Երաշխաւորաններ, Գիրքեր, Հրատիրագրեր, Մահազրկեր, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմարներ և այլ և այլ տարանի վերաբերեալ յանձնարարութիւններու կը վաճառուին հետեւեալ գրքերն:

1. ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ Ս. և Բ. պրակներն, որոնք նոր հասած են և որոց մասին արդէն խօսուած է «Արշալոյսի» մէջ:
2. ՈՐԲՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արգիլուած է եղեր:
3. ՀԱՒԱՔԱՄՈՑ հայոց ժողովրդական երգերու, Փարիզ տպագրեալ, Տնօրինութեամբ Տ. Լեոն Եղիազարեանցի:
4. ՉՈՒԱՐՃԱԼԻ Անիքթոններ և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային կենաց վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ:

ՏՃԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՄՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԻԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ Ի Գահիլէ

Աշխարհի մէջ գտնուող շուրջ 200 և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործաւկատար յԱզգեքսանդրիա